ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ ԹԻՒ Զ. **1870** ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ ՀՈՒՐ

(Ն. Բ-ԷՆ Ճայելոյ)

Սուրբ Յակոբայ վանքի մօտ 15 քայլ հեռաւորութեամբ աւազուտ լեռան կուրծքի վերայ բղխի մի նշանաւոր աղբիւր՝ երբեմն յորդահոս, բայց 1840 թուիցն՝ մեծ շարժի ներգործութեամբն շատ փոքրացած, որ հաղիւ մի ժամ միջոցաւ կ'լցնէր փոքրիկ աւազանն քարեայ, որ աղբիւրի ջրոյ կաթիլքի ներքև էր դրված։

Վանքն յանուն և 'ի պատիւ Ս. Յակոբայ շինված է այն անուանի աղբիւրի պատճառաւ, որ Ս. Հայրապետն երբ Նոյեան Տապանի տեսութեան սիրոմն կ'աշխատէր բարձրանալ Արարատ լեռան գագաթն, հասաւ այն բլրակի տափարակ գլուխն, ուր շատ հոգնելուցն ննջեց և տեսիլքով ընդունեց հրեշտակէն Նոյեան Տապանի մի տախտակի մասն, որ այժմ Ս. Էջմիածնայ Սրբարանի մէջն է՝ Ս. Յակոբայ աջ բազկից կախած՝ Աստրոց տառերով փորագրած. և այս ճգնութեամբ աշխատութեան համար և 'ի մխիթարութիւն Սրբոյն՝ պարգևեց նրան այն տախտակի մասն. և հրեշտակի խօսքն ճշմարտելոյ համար բղխեցրեց այն տեղ այն սուրբ ջուրն, որ փարատումն է ամենայն ցաւմանց և հասարակական վնասուց, այն է՝ ժանգոյ, թրթրոյ, մարախոյ, երաշտութեան և այլ սոյնպիսեաց, ինչպէս որ Յայսմաւուրքն առնլով զանազան պատմագրերէն գրէ Դեկտ. ԺԵ. Վարդայ Է. հետևեալ կարգաւն։

,,Սուրբն Յակոբ ցանկացաւ տեսանել ,,զ'Նոյեան Տապանն. և գնացեալ 'ի լեա-

,,որն Մասիս, և մինչդեռ ելանէր ափսի-
,,թերս ընդ անջուր ափափայս լերինն,
,,աշխատեալ ծարաւեցաւ նա՝ և որք ընդ
,,նմայն էին. և 'ի նոյն տեղին, ուր զգը-
,,լուխն եդ, եկ աղբիւր ջրոյ ցուրտ և բա-
,,ռեհամ. որ կայ մինչև ցայսօր, և է բա-
,,զում ցաւոց փարատիչ աղբիւրն այն
,,բանիւն Աստուծոյ, և աղօթիւք Ս. Յա-
,,կոբայ. և ինքն աշխատեալ ժամէր զցան-
,,կալին տեսանել. և մինչ էր խոնջեալ
,,ընդ ելանելն 'ի վեր 'ի դժուարին տեղին՝
,,մօտ 'ի կատար լերին՝ և կարի վատա-
,,կեալ՝ ննջեաց. և եկեալ առ նա հրեշ-
,,տակ Տեառն՝ և ասաց, Յակոբ Յակոբ.
,,և նա ասաց՝ սուսիկ եմ Տէր. և ասաց
,,հրեշտակն, ահա ընկալաւ Տէր զաղաչանս
,,քո։ Երդ որ է 'ի սնարս քո, է 'ի փայ-
,,տից Տապանին. և այլ մի' ևս յաւելցիս
,,տեսանել զնա, զի Տէր այսպէս կամեցաւ.
,,և նա յոտն կացեալ զոհանայր զԱստու-
,,ծոյ և երկիր պագանէր Տեառն, և տե-
,,սանէր զտախտակն որպէս կացնաւ հա-
,,ռեալ և հանեալ 'ի մեծ ինչ փայտէ, և
,,առեալ դարձաւ անտի ուրախութեամբ
,,մեծաւ խրբև զմեծն Մովսէս 'ի Սինայ
,,լեռնէն։ Ինչպէս և կրթացայայտէ Շարա-
,,կանն Ս. Յակոբայ՝ ըստ այսմ՝

,,Յանձն առեր զչարչարանս վասն Նո-
,,յեան Տապանին, 'ի հրեշտակն ընկա-
,,լար զփայտ փրկութեան աշխարհի. զքեզ
,,ունիմք բարեխօս առ Այր յերկինս
,,վասն մեր։

,,Որ բազկատարած հայցմամբ խնդրե-
,,լով 'ի Տեառնէ զողորմութիւն, և աղ-
,,ւիւր բժշկութեան ընկալեալ 'ի Այասման
,,աշխարհի, զԲրիատոս Թագաւորն յիշա-
,,տակի սորա բարձր արարէք յաւիտեան։

,,Որ յանապատ կոչեցար յԱռաքե-
,,լական Աթոռ բանիւ Սուրբ Յակոբ,
,,բարձրացուցեր զեղջերս Սիոնի ճշմար-
,,տութեամբ, մասամբ Նոյեան Տապանին։

Այսպէս և այս տարի պատահեց՝ երաշ-
տութեան պատճառաւ՝ հրաւիրանօք քա-
ղաքի հասարակութեան ըստ վաղեմի սո-
վորութեան՝ բաւական բազմութեամբ՝
Վարդապետաք՝ Քահանայիք և Իշխա-
նաք և ամենայն կարգի և աստիճանի ժո-
ղովրդովք գնալ 'ի Ս. Յակոբայ վանքն, և
այն սուրբ աղբիւրի ջրէն բերել և մխի-
թարվիլ։ Եւ որովհետև Աստուած միշտ
մարդկեղէն ստեղծուածոց խրատելու պատ-
ճառաւ՝ որ ըստ իմաստնոյն ,,Օրոր սիրէ
Տէր՝ խրատէ. տանջէ զամենայն զորդի,
զոր ընդունի,,*), երբեմն երբեմն տարե-
րաց բնութիւնն փոփոխելով՝ կը վշտացնէ
նոցա, և զանազան ոչ ինչ աղդաւ և ամե-
նափոքր անբան կենդանիով կը ցաւեցնէ նո-
ցա սիրտը, ինչպէս Մովսէս Մարգարէի
ձեռքով, այլ և այլ չնչին կենդանիքով
խրատեց և զգուշացրեց Փարաւոնին և
Եգիպտացի ժողովրդոց՝ ճանաչել Տեառն
Ամենակալի զօրութիւնն։ Բայց նոքա կա-
մապաշտութեամբ չը լսելով մեծ մարգա-
բէի Աստուածատուր պատգամացն՝ Կար-
միր ծովի յատակը գնացին, և անհետա-
ցան աշխարհքից, ինչպէս Աստուածա-
շունչ սուրբ գիրքը կ'հաւատարմացուցա-
նէ։ Այսպէս և Եղիայ Մարգարէի ձեռ-
քովն երեք տարի և վեց ամիս Երկից յան-
դգնութիւնն սանձելոյ համար չ'թոյլատրե-
լով տարերաց կարգապահութիւնն՝ փակեց երկինքը՝ երկրին անձրև տալոյ համար.

(*) Առակ. Գ. 12։

և դարձեալ Մարգարէի աղօթիւք խնայելով ժողովրդեանն՝ անձրևով պարարտացրեց երկրի բերքը և մխիթարեց ժողովրդեանն*)։ Այսպէս ևս Երևան քաղաքի ժողովուրդը տեսանելով Աստուծոյ բարկութեան նշանն տարերքի հակառակ ծառայութեանց մէջ, որպէս 'ի սկզբանէ Քրիստոնէութեանն սովոր է՝ պատրաստվեց դիմելոյ նոր Երդեայ—Ս. Յակոբ Հայրապետի մօտ, որ աղօթիւքն բարեխօսէ առ Աստուած՝ անձրևածին ամպովք ղովացնել երկրի երեսը, որով և լցուցանել ժողովրդեան մարմնական կարօտութիւնն։ Ուստի և ամսոյս 1-ին ամենայն ճանապարհորդական բան և պարագայք պատրաստած՝ որպէս ասացի բաւական բաղմութեամբ՝ դուրս գնացինք քաղաքիցն, և նոյն օրն Երասխն անցնելով Երևանայ գաւառի՝ Գառնիբասարայ գաւառկի՝ Թամամլու գիւղի մօտիցն՝ հասանք երեկոյեանն 'Նոր-Էրկուռի (այժմ ըստ Պարսից Ենգեղլ.) Հայաբնակ գիւղն, որ Էրկուռայ պատժից հեռու մնացած քանի մարդկանց ժողովն է։

Գիշերն հանգստացանք գիւղի Քահանայի տանն. իսկ ընկերքս այս գիւղի մօտ Ռուսաց սահմանապահ ձիաւոր զօրաց կացարանների մէջ (շտաբ զաղախաց—штабъ Казачскій)։

'Նոր-Էրկուռի գիւղն բաղկանայ 50 տուներն. ունի մի հասարակ շինուածքով Երկեղեցի՝ գիւղի հետ շինուած 1841 թուին. իսկ ուսումնարանի վրայ նոր էին մտածում։

Գիւղացւոյ ծերունիքն ականատես գոլով 1840 թուի շարժից Մասսի պատառուածքին և Էրկուռի գիւղի և Ս. Յակոբայ վանքի հիմնայատակ լինելոյն, որք դաշտերի մէջ և հեռաւոր գիւղերումն անձնական գործով պարապելոյ պատճառաւ՝ ազատ էին մնացել այն սարսափելի պատժից, ցաւօք սրտի կ'պատմին իւրեանց գիւղի քանի տարի յառաջ մարդկանց բազմութիւնն և գիւղական շինութիւններն և մանաւանդ Երկեղեցին՝ սուրբ Յակոբայ վանքն, որք ամենայն վայելչութեամբ և փառաւորութեամբ կ'ուրախացնէին տեսողաց սիրտը։ Այսպէս նոքա պատմելով՝ և մենք նոցա մխիթարելով՝ գիշերն անցուցինք։ Առաւօտեանն գոհանալով զԱստուծոյ՝ ուղևորեցինք դէպ 'ի Ս. Յակոբայ վանքը. և դէպ 'ի լեռանկուրծքը բարձրանալով և բաւական գնալով՝ հասանք Էրկուռի գիւղն անհետացած տեղը. ուր քիչ մի կանգ առած՝ տեղի դրութիւնն զննելով՝ և Աստուծոյ սքանչելի տնօրէնութեան վրայ մտածելով և զարմանալով՝ անցաք դէպ 'ի վեր 'ի լեռան վերատին. վասն զի այն անուանի և հնութեամբն նշանաւոր Էրկուռի գիւղի ոչ մի նշանն կարացինք տեսնել, բայց միայն քանի խաչքարինք եկեղեցւոյ տեղւոյ մօտ՝ գերեզմանաց վերայ կանգնեցրած՝ ըստ վաղեմի բարեպաշտ սովորութեան Հայ-Քրիստոնէից, որպէս ամենայն հին քաղաքատեղեաց և գիւղատեղեաց մօտ, նոյնպէս և վանօրէից մօտ, մանաւանդ Հին-Ջուղայ երբեմն քաղաքի գերեզմանատան մէջ՝ 1—2 դար յառաջ կանգնեցրած խաչքարերն, որ հեռուից նկատողն կ'կարծէ ահագին հեծելազօրաց խումբ լինել կանգնած. որոց մէջ է այժմեան Հայոց նշանա

(*) Յակոբ Առաք. Ե. 17

ւոր իշխանապետաց Լազարեանց ազգատոհմի նախահայր՝ յիշատակաց արժանի Խոջայ Խաչիկի գերեզմանի վրայ կանգնեցրած գեղեցկաշէն մեծադիր խաչքարն, որոյ վերայ 1866 թուին կարդացի հետեւեալ արձանագիրն. ,,Սուրբ Խաչս բարեխաւս առ Քրիստոս մեծ և անուանի Քաղաքապետ Խոջայ Խաչիկին, որ 'ի ՌՆԴՐ (1603) թուին հանգեաւ 'ի Քրիստոս,,. որոյ տառից և ծաղկանց փորուածքն շատ նուրբ և գեղեցիկ։

Շատ ցաւելով, մտածելով և խօսելով հանդարտիկ՝ երբեմն ձիով՝ և երբեմն ոտքով՝ վերատին բարձրանալով՝ հասանք վերջապէս Ս. Յակոբայ վանքի մօտն. ուր փոքր ինչ հանգստանալով՝ սկսեցինք իւրաքանչիւրքս մեզ վերաբերեալ գործոնն պարապիլ։

Այս ուխտաղնացութեան միջոցին՝ ամենայն կարգադրութեան մէջ ճանապարհորդ եղբարքն կ'ապասէին Մկրտիչ Վարդապետի Յովսէփ վանից Վանահօր խոհեմ կարգադրութեանն. որով և ամենայն սիրով և խաղաղութեամբ չափեցինք ճանապարհի երկայնութիւնն. ուստի և հանգստանալուց զկնի՝ հոգևորականքս սկսեցինք ասել Ն'աշու ժամերգութիւնն, և զկնի՝ Ս. Յակոբ Հայրապետի քաղցրանուագ շարականներովն և սահմանեալ աղօթքովն խաչալուայի կարգը կատարելով աւազանի սուրբ ջրոյ վերայ՝ իւրաքանչիւր ոք ուխտաւորներիցն լցուցին իւրեանց անօթներն սուրբ ջրով՝ և ամրացուցին. և ապա՝ վերակացութեամբ հին և նոր պատգամաւորաց Երևան քաղաքի (депутатъ) Պ. Մկրտչի Մարտիրոսեանց և Պ. Մկրտչի Սանահեանց պատրաստված փառաւոր և հարուստ մատաղի անուշ մսով ճաշն վայելեցինք. և փառք տալով Աստուծոյ՝ ելինք շրջագայել վանքի շրջագայքը, որ մի հնութեան կամ նորութեան նշան գտնէինք. բայց Աստուծոյ բարկութեան պատիժն այնպէս էր ջնջել՝ անհետացրել այնպիսի նշաններն, որ կարծես հաղարաւոր տարիներ յառաջ՝ այնտեղ երբէք չէր եղել շինութիւն. վասն զի՝ վանքի հաղիւ թէ հետքն և հիմանց նշանն կ'երևէր. իսկ այն հռչակաւոր աղբիւրի՝ միայն քարեայ աւազանն, և կաթիլ կաթիլ թափած ջուրն, որով միայն կ'մխիթարվէին բարեպաշտ ուխտաւորքն. վանքի մօտիցն ահագին բարձրութեամբ կ'երևէր Մասիս լեռան մեծ խորաձորի գլխի 1840 թուի շարժից փլուածքն և այն ամենաթանձր ձիւնն, որ հաղարաւոր դարերով և տարիներով յառաջ՝ մինչև ցայսօր՝ բարդուեր և դիզուեր է լեռան գագաթին. որ այն տեղից նայողն կ'կարծէ՝ թէ՝ ձիւնն նոր է փլուեր այն տեղէն. վասն զի՝ վանքի տեղը բուն իսկ խորաձորի մէջն է և փլուածքին մօտ։ Խորը լռութիւնն առանձին սարսափ կ'ձգէր մեզ վերայ, երբ փոքր ինչ կ'հեռանայինք ուխտաւորներէն և հայեցուածքնիս կ'դարձնէինք այն զարհուրելի փլուածքի վերայ։

Եթէ մինչև այս տեղ 60 ձիաւորօք գնալն ոչ սակաւ երկիւղի պատճառ էր լինում մեզ, և կ'շտապէինք չ'զիշերել այն տեղ, այլ իբրև բանտից և աւազակից փախչել, հապա ի՞նչպէս Պ. Բարրոան կը համարձակէր անդր քան զսահմանն բնութեան անցանել և բարձրանալ այն տեղ, ուր հրամանաւն Աստուծոյ պոհված կայ միայն Նոյեան Տապանն. որ մարդկու-

թեան երկրորդ ծնողաց ապաստարանն է եղել և հաղարաւոր դարերով անմատչելի մնացել մարդկանց ոտքից։

Հոգևոր և մարմնաւոր պարտքերս աւարտելուց ետոյ՝ վերադարձանք այնօր վերջին Նոր-Երկուռի գիւղն, և հանգիստ գիշերելով՝ առաւօտեանն ուղևորեցինք դէպ 'ի Երևան՝ նոյն գնացած ճանապարհովն։

Ճանապարհի վերայ եղած գիւղօրէից Հայ-Քրիստոնեայ ժողովուրդը՝ Ս. Յակոբայ ջուրը բերելիս իմանալով՝ հոգևորական հանդիսով՝ մեծ բազմութեամբ կ'դիմաւորէին ուխտաւորաց. և քանի տեղ մատաղներ պատրաստելով 'ի կերակուր աղքատաց՝ հրաւիրեցին և զմեզ հանդստանալ և հացկերութով ուրախանալ, և ապա անցնել գնալ. ուր յետ անդաստանի կարգը կատարելոյն՝ այն սուրբ ջրէն մասն կ'թողայինք եկեղեցեաց մէջ, որ ըստ բարեպաշտ սովորութեանն՝ հանդիսով տանին դաշտը և հանտերն օրհնելով սրսկեն առուակների ջրոյ վերայ. որով երկնային բերքն և պտուղը ազատ մնան թըրթրից, մարախից և այլ պատահարներից, որպէս միշտ լսել ենք մեր մեծերից և տեսել 1847 և ուրիշ թուերում. վասն զի մարախի տարածման միջոցին՝ երբ այն սուրբ ջրէն տանին ուր և իցէ, ահագին բազմութեամբ թռչնոց երամք, որոց տեսակն առ հասարակ Հայաստանի մէջ՝ ,,Ս. Յակոբայ ղ-ղ,, անուանեն, որք են փոքր ինչ նման սարեկ թռչունին՝ ձայնով և մարմնոյ գրութեամբ. բայց այս Ս. Յակոբայ թռչնոց թիկունքը սպիտակագոյն է և գեղեցիկ։

Այսպէս հոչակոր ուրախութեամբ զմայլած՝ գալով հասանք Երևան քաղաքի բերդի մօտն. ուր դիմաւորել էին ըստ առանձին տնօրէնութեան քաղաքի բոլոր հոգևորականաց դասքը ամենայն եկեղեցական զարդուք՝ կարգադրութեամբ նախանդամոյ Թեմական Ատենին Երևանայ Եր-ժանապատիւ Գրիգոր Վարդապետի Տ. Մատթէոսեան, և ամենայն Հայ ժողովրդոց բազմութիւնն՝ ծերք և տղայք, արք և կանայք, 'ի թիւս որոց և շատ օտարազգիք, Ռուսք՝ Լեհացիք՝ Պարսիկք և Քուրդք, որք զանազան պաշտօնով և գործով գտանին Երևան։ Այս տեղ էր տեսանել ժողովրդեան սրտի ջափազանց ուրախութիւնն, երբ իւրեանց հոգեկան ցանկութեանն համաձայն՝ Ամենողորմած Հայրն Աստուած քաղցրութեամբ լսելով նոցա գորովաշարժ որդիական աղաղակը՝ ըստ սուրբ աւետարանութեանց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի թէ ,,Հայցեցէք և տայցի՝ բաղխեցէք և բացցի ձեզ,,*) առատապէս տեղաց յերկնից զովացուցիչ անձրևն՝ այնքան, որքան երկրին պէտք էր. որոյ համար իսկ այնքան ճգնութիւնն, աղօթքն և հայցուածքն կատարել էին։ Թէ և օտար ազգերն և օտարահոգի մարդիկն չեն հաւատալ, և այսուհետև ևս թող չ'հաւատան Աստուծոյ թոյլատրած հրաշագործութեանցն և սքանչելեացն, որպէս շատ հակառակասէր և անկրօն գրիչներն ժամանակ առ ժամանակ համարձակեր են ընդդիմանալ այս անսխալ ճշմարտութեանցն. բայց սակայն Հայ-քրիստոնեայք աղաղուին՝ Քրիստոնէութեան սուրբ հաւատն ու կրօնը ստացած օրէն՝ հոգւով և ճշ-

(*) Մատթէոս Ա. Եւ. Է. 7։

մարտութեամբ պիտի հաւատացած են սուրբ գրոց, և նրանց հաւատարիմ վկայութեամբն՝ ընդունած են և յաւիտեանս յաւիտենից պիտի հաւատան և ընդունին, որ ամենակարողն Աստուած իւր սիրելի ծառայից ձեռքով՝ Մարգարէից ասեմ և Առաքելոց և ամենայն սրբոց հնոց և նորոց՝ միշտ հարկաւոր դէպքերում և տեղերում ցոյց է տուել մեծ մեծ հրաշքներ և զօրութիւններ՝ ըստ Ս. Աւետարանին, թէ ,,Եթէ հաւատացես, մեծամեծս քան զսոյն գործեսցես,,*). և թէ ,,Բազում նշանք և արուեստք 'ի ձեռս Առաքելոցն գործէին,,**)։

Այսպէս մեծ հանդիսով՝ հոգևորական երդումք և սահմանեալ աղօթքով հասուցինք Ս. Յակոբայ Ջուրն Ս. Սարգսի Առաջնորդական եկեղեցին քաղաքիս՝ ուր և յետ հարկաւորն կարդաց կատարմանն՝ ժամուն և առարկային յարմար բանախօսութեամբ բացատրեցի ժողովրդոց՝ Աստուծոյ անօրէնութեան սքանչելի խորհրդոց հետզհետէ կատարումն ստանալն, և Աստուծոյ անսահման սէրն դէպ 'ի մարդն՝ յիշեցնելով Առաքելոյ բանն՝ որ կ'ասէ ,,Հղեայ մարդ էր իբրև զմեզ չարչարելի. եկայ յաղօթս . . . և տեղայ երկինք զանձրև,, և ապա՝ երեկոյեան ժամերգութեան կարգը կատարեցինք և իւրաքանչիւր մարդ հոգեկան և մարմնական ուրախութեամբ լցուած՝ գնաց իւր տունը. բայց և բանախօսութեանս միջոցով իմացան, որ փաղը կիւրակէ օրն ամենեքեանքն Բահանայք և ժողովուրդք պէտք է գան՝ ժողովուին Առաջնորդական եկեղեցին, որ հանդիսով սուրբ Ջուրը տանենք հանդերն օրհնելոյ և սրսկելոյ։ Հետևեալ օրն՝ զկնի Ս. պատարագին՝ հոգևորականաց դասակարգութիւնն ամենայն շքեղութեամբ հանդիսի՝ պատրաստված խառն ընդ մեծագումար բազմութեան քաղաքին՝ երդումք և Հ. արականաք՝ ինչպէս Ջրօրհնեաց հանդէսն է կատարվում, Բաղաքի հրապարակի միջոցն (բուլվարի մօտ՝ Նահանգապետի տան առաջին)՝ անցանք գնացինք Նախիջևանայ ճանապարհովն, և հասնելով քաղաքի հարաւային ծայրը՝ մի գեղեցիկ կանաչազարդ տափարակ տեղ, և սկսեցինք հանդասանի համար սահմանուած կարգը կատարել. և ապա՝ Մաշտոցի մէջ տպած աղօթքներն կարդալով երաշտութեան համար՝ Խաչալուայի կարգ կատարել, Ջուր օրհնելով սրսկել ժողովրդեան և արտօրէից վերայ՝ սովորական կարգադրութեան համաձայն։

Երդմանէ սքանչելի տեսարան էր և ուրախ հանդէս. վասն զի՝ կարծես Քրիստոսի Տեառն մերոյ փրկարար քարոզութեանց ունկնդիր բարեպաշտ ժողովրդեան սրբացած խումբը լինէր՝ այս հանդիսի փառաւորութիւն պատճառող ժողովուրդը, որ երբեմն կանաչազարդ լերանց ստորոտներումն, և երբեմն ծաղկազարդ դաշտաց տափարակ վայրերումն դաս դաս բազմած՝ Տեառն Յիսուսի երանական քարոզութիւնքը լսելով՝ այնքան զմայլած, մինչև երկու՝ երեք օրերով մոռանալ հաց անգամ ուտելն, այնքան՝ մինչև դիշեր և ցերեկ նորա հետ շրջելն ամենամեծ ուրախութիւն համարել՝ ձայնելով ,,Տէր առ

(*) Յօհան. ԺԴ. 12։
(**) Գործ. Բ. 43։

ոմ՝ երթիցուք, բանս կենաց յաւիտենական ունիս,,*)։

Բազմութեան սրտի ուրախութիւնն բացայայտ փայլում էր երեսների վերայ, և ամենի բերանից հնչվում էր՝ օրհնութիւն, գոհութիւն և փառք Աստուծոյն անմահի և բարերարի, որ ամենայն ժամանակ պատրաստ է լսել իւր խոնարհ որդւոց աղաղակը, և կատարելով նոցա բարի խնդիրներն՝ բաւականացնել և մխիթարել այս և այն կեանքումն։ Երևանայ Հայ-քրիստոնեայ բազմութիւնն Նինուէացւոց ապաշխարութեամբն ապաշխարելով՝ համարեա թէ որդիական իրաւունքի ուժով**) ստացաւ յամենողորմ Աստուծոյ՝ իւրեանց խնդրելիքն՝ և բաւականացան։ Բազմութիւնն այնքան էր, մինչև որ հրապարակներն՝ սկսած Առաջնորդական եկեղեցւոյ զաւթիցն՝ մինչև հանդուստանի կարգը կատարման տեղին՝ փրոված՝ տարածված էր, որ առաջին անգամն էր ինձ տեսանել Երևան այնքան բազմութիւն։

Հոգևոր հանդէսն կատարելուց զկնի՝ նոյնպիսի կարգով և շարականներով վերադարձանք նոյն իսկ բազմութեան հետ միասին՝ Ս. Սարգիս եկեղեցին. ուր և ,,Հովիւ քաջ՞և հովիւ բարի,, զօրաւոր աղօթքով օրհնելով ժողովրդեանն՝ աւարտեցինք հանդիսակատարութիւնն. և իւրաքանչիւրքս ուրախ ուրախ գնացինք մեր գործին, և երկիրն ընդունեց երկնից քաղցր ցօղը՝ նախախնամութեամբ վերին Տեսչութեանն. որում այժմ և միշտ փառք, պատիւ և երկրպագութիւն. ամէն։

ՄԵՍՐՈՊ Վ. ԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ.

Երևան

(*) Յոհան Զ. 69։

(**) Մատթ. ԺԱ. 12։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄՈՍ ԿՈՄԵՈՆԻՈՍ ԵՒ ՆՈՐԱ ԴԻՏԱԳԻԴԱ ՄԱԿՆԱ։

(Շարունակութիւն)

ԺԷ-ԲՈՂ ԳԼԽԻՑ

ԱՄԵՆԱՊԻՒՐԻՆ ԿԵՐՊՈՎ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ.

ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆ

Ամենայնը դէպ անպէս է նէ՝ պատրաստուած, որ նորա մէջ բոլոր պայմանները լինին՝ որոշեալ յաւ գործելու համար։

Զուի մէջ գոյացած ձագը շարժուում է, վախճանական զոյութիւն առնելը պահանջելով, և ծնվում է՝ կեղևի տակից ազատուելով. նա ազատութեամբ կառչը բաց է անում՝ կերակրուելու համար. նա ինքն վարժում է իւր թևերը, միով բանիւ, նորա մէջ կայ ամենայն գործողութիւն առնելու զրդիռ։

Ամ որ աշակերտներին ուսում է զրդում այն ժամանակ, երբ նորա ուսանել չեն ցանկանում, նա անբնական է վարվում։ Զուի կերակուրը փսխեցնում է, վատ մարսուածը — ցաւ է պատճառում։ Իսկ քաղցած ստամքսը լաւ է մարսում կերակուր։ Ուսոի և Սոկրատեսը ասաց՝ ,,Ուսումնասէրը շատ բան կուսանի". իսկ Քուինտիլիանոսը ասաց. "Ուսման փափաքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ յօժար կամք, որ ստիպմամբ երբէք չի զրդուել"։

Ուսոի նախ և առաջ հարկաւոր է աշակերտների մէջ բորբոքել և զրդռել սէր առ ուսում,